



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔ

25 դեկտեմբերի 2019 թվական

3-ԴԴ ՆՏՏԱՇՐՋԱՆԻ 4-ԴԴ ՆԻՍՏ

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԲԱՆԱՎՈՐ ՀԱՐՑԵՐԻ ՈՒ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԻ

ՍՂԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ժամը 20.00

Հայկ Մարության

-Ավագանու հարգելի անդամներ, հարց ու պատասխանի համար գրանցվել են
ավագանու 15 անդամ՝

Էռնեստ Ավանեսով՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցություն,

Մարկոս Հարությունյան՝ ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցություն

Դավիթ Խաժակյան՝ ԼՈՒՅՍ խմբակցություն,

Գայանե Մելքոմ Մելքոմյան՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցություն,

Արմեն Ներսիսյան՝ ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցություն,

Անի Խաչատրյան՝ ԼՈՒՅՍ խմբակցություն,

Լիլիթ Կիրակոսյան՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցություն,

Հռիփսիմե Առաքելյան՝ ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցություն,

Թեհմինա Վարդանյան՝ ԼՈՒՅՍ խմբակցություն,

Մարատ Թոխյան՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցություն,

Աննա Ջավախյան՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցություն,

Լևոն Ջաքարյան՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցություն,

Արմեն Գալջյան՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցություն,

Մաթենիկ Մկրտչյան՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցություն,

Արման Անտոնյան՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցություն,

Առաջին հարցը՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ Էռնեստ Ավանեսով, խնդրեմ:

Էռնեստ Ավանեսով

-Առաջին հարցս վերաբերում է Շենգավիթ վարչական շրջանում Չարբախի փոսի՝ ձեռնոցի դիք կոչվող հաստվածին: Այնտեղ գետնից բավականին բարձր, երկու մեծ դիտահորեր կան, դրանք շրջադարձի վրա են և բավականին վտանգավոր իրավիճակ են ստեղծում, երբ երկու մեքենաներ են հանդիպակաց գալիս: Արդյոք կարելի է այդ դիտահորերի հարցը լուծել, որպեսզի դրանք հարթ լինեն՝ գետնին համապատասխան:

Այդ հաստվածից մի փոքր ներքև դեռ դրված են սև աղբամաններ: Կցանկանայի իմանալ, թե այդտեղ ե՞րբ կդրվեն նոր աղբամաններ: Շնորհակալություն:

Հայկ Մարության

-Հարցին կպատասխանի Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ Հրայր Մարգարյանը:

Հրայր Մարգարյան

-Բյուջեով գումար ենք հատկացրել դիտահորերի վերանորոգման և դրանք ճանապարհային պայմաններին համապատասխանեցնելու համար: Կարող ենք Ձեր բարձրացրած հարցը քննարկել և լուծել բյուջեի այդ հոդվածում հաստատված գումարների շրջանակներում:

Ինչ վերաբերում է աղբամաններին՝ դա դեռ ընթացքի մեջ է, կարծում եմ դրան նույնպես կարող ենք անդրադառնալ:

Հայկ Մարության

-Մենք գնման ընթացակարգ ունենք ևս **4000** աղբամանի, չհաշված **1000** մետաղյա աղբամանը, բայց ավելի հստակ վերջին երկու մրցույթի մասին կներկայացնի քաղաքապետարանի աշխատակազմի գնումների վարչության պետ Էդգար Կիրակոսյանը, խնդրեմ:

Էդգար Կիրակոսյան

-Երկու մրցույթ կա պարոն քաղաքապետ, դրանցից մեկի շահողը հայտով ներկայացրել էր սերբական ֆիրմայի աղբամաններ: Ինչ-որ խնդիրներ են ծագել, դիմել է գնահատող հանձնաժողովին, որ փոխի և այլ երկրի աղբաման մատակարարի: Գրություն ենք գրել ՀՀ ֆինանսների նախարարություն պարզաբանման համար: Այդ մրցույթի համար ժամկետ չեմ կարող ասել:

Երկրորդ մրցույթը բողոքարկվել է, **2020թ. հունվարի 4-ին բողոքը քննողի մոտ նիստ է նշանակվել, իհարկե այդ օրը կփոխվի, քանի որ աշխատանքային օր չէ:**

Երկու մրցույթների մասով էլ այս պահին ժամկետ նշել չեմ կարող:

Հայկ Մարության

-Պարոն Ավանեսով աղբամանների մասով ժամկետ չենք կարող ասել, բայց դիտահորերի մասով աշխատակազմի շինարարության և բարեկարգման վարչության պետ Գրիգոր Հարությունյանը կպատասխանի:

Գրիգոր Հարությունյան

-Շնորհակալություն պարոն քաղաքապետ: Դիտահորերի մասով ասեմ, որ դրանք պատկանում են «Վեոլիա ջուր» ընկերությանը: Բնակիչները վճարում են իրենց, բայց չգիտես ինչու պահանջում են քաղաքապետարանից:

Հայկ Մարության

-Հասկանալի է, սակայն այնուամենայնիվ մենք ունեք ծրագիր և «Վեոլիա ջուր» ընկերության հետ համատեղ պատրաստ ենք որոշակի քայլեր անենք:

Էռնեստ Ավանեսով

-Երկրորդ հարցս հնչեցնեմ. ինձ դիմել է քաղաքացի, ով ասում է, որ երկու օր առաջ Հանրապետության հրապարակում նկարվելու դիմաց գումար վճարելու համար նկարողից ուզել է համապատասխան կտրոն: Այդտեղ հղում են արել քաղաքապետարանին՝ ասելով գնացեք քաղաքապետարանից պահանջեք, քաղաքապետարանն է մեզ այստեղ ուղղորդել:

Ես խնդրում եմ, որպեսզի տարընթերցում չլինի, այս մասով պարզաբանում տրվի՝ քաղաքապետարանը կապ ունի, թե ոչ:

Հայկ Մարության

-Հարցին կպատասխանի քաղաքապետի տեղակալ Սերգեյ Հարությունյանը:

Սերգեյ Հարությունյան

-Այդ դեպքից **10** րոպե հետո ոստիկանությունն ինձ տեղեկացրել է այդ մասին: Ես խնդրել եմ, որ ոստիկանությունը շատ խիստ արձագանքի, եթե հրապարակում որևէ մեկը փորձի քաղաքապետարանի անունից ասել, որ ինքը լիազորություն ունի գումար ուզելու: Մեզ մոտ նաև թեժ գծի հեռախոսահամարով ահազանգ է եղել: Դա վերաբերվում է նաև ձմեռ պապիներին և ձյունանուշիկներին, ովքեր լիցենզիա են ստացել, նրանք նույնպես իրավունք չունեն գումար պահանջելու: Նույնը վերաբերվում է նաև այդ լուսանկարչին, նա իրավունք չունեք գումար պահանջելու:

Հայկ Մարության

-Հաջորդ հարցը՝ ԲԱԸԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության անդամ Մարկոս Հարությունյան, խնդրեմ:

Մարկոս Հարությունյան

-Շնորհակալություն, հարցս վերաբերում է ինքնակամ շինություններին: Ես տեղյակ եմ, որ քննարկվում է ՀՀ կառավարության հ. 912 որոշումը վերանայելու, փոփոխություններ կատարելու կամ չեղարկելու մասին հարցը, սակայն նույնիսկ եթե նոր օրենք դուրս գա, հների վրա դա չի կարող անդրադառնալ: Միննույն է այն ինչ ունենք քաղաքում, մնալու է:

Իմ կարծիքը հետևյալն է, որ Դուք՝ որպես հեղափոխական քաղաքապետ, պարտավոր եք գոնե Ձեր պաշտոնավարման ժամկետի սահմաններում, ինչքան կարող եք մաքրել քաղաքն այդ անօրինականություններից: Մաքրել ասվածը հետևյալն է՝ որը կառուցված է օրենքի կոպիտ խախտումով, իմ կարծիքով պետք է քանդվի, իսկ որը սեփականաշնորհման ենթակա է, պետք է սեփականաշնորհվի: Այսինքն՝ այսպես թե այնպես, գոնե Ձեր պաշտոնավարման ժամկետը լրանալուց հետո, այն մարդիկ, ովքեր ուրիշ նպատակներով կցանկանան քաղաքապետ դառնալ, չունենան հնարավորություն դա անելու: Մենք բոլորս էլ հասկանում ենք, որ ապօրինությունները եղել են գումար աշխատելու միջոց, նախկին իշխանություններին միշտ ընդդիմադիրները մեղադրել են թալանի մեջ: Բոլորս լավ հասկանում ենք, թե քաղաքապետարանի թալանը որտեղ է եղել:

Ասածս այն է, որ Դուք կարծես թե տեղ եք թողնում, որ Ձեզնից հետո մարդիկ գան ու ցանկանան գումար աշխատել: Պետք է այնպես մաքուր պահել քաղաքը, որ Ձեզնից հետո մարդը գա և հասկանա, որ պետք է գումարներ հավաքի, աղբահանություն, կանաչապատում իրականացնի: Ոչ թե նստի սենյակում հրահանգ տա մի վարչության պետի, որ ավարտական ակտերի համար, ինքնակամ շինությունների համար գումարներ վճարեն և ովքեր կտան կսեփականաշնորհեն:

Դուք հեղափոխական քաղաքապետ եք և, իմ կարծիքով, միայն Դուք կարող եք այս հարցը լուծել: Ես իրոք հավատում եմ, որ այսօր քաղաքապետարանում չկա կոռուպցիա, որովհետև մեկ տարի չորս ամիս այստեղ եմ, այդպիսի դեպքեր չեմ նկատել: Ամենահարմար անձը Դուք եք, որ կարող եք այս խնդիրը լուծել:

Հայկ Մարության

-Շնորհակալ եմ պարոն Հարությունյան: Ինքնակամ շինությունների օրինականացման գործընթացով 470%-ով մեր պլանը գերակատարել ենք, այսինքն մաքսիմալ պրոդուկտիվ է այս ամենն ընթանում: Սակայն այստեղ ես ցանկանում եմ ասել, որ մենք շեշտը դրել ենք սեփական տների, ոչ թե տնտեսվարողների գործունեությանը: Այն հարցը, որ համայնքի հողի

վրա ինչ-որ մեկն ապօրինի շինարարություն է իրականացրել, խանութ է կառուցել և գործունեություն է իրականացնում, որքան էլ ՀՀ կառավարության 912-Ն որոշումը հնարավորություն է տալիս դա էլ օրինականացնելու, ինձ համար շատ խնդրահարույց է սա:

Կոնկրետ այս հարցով խորհրդակցություն ենք հրավիրել մոտակա օրերին, բոլոր շահագրգիռ կողմերի հետ: Պետք է քննարկենք, հասկանանք ինչ ենք անում, որովհետև մի փոքր անարդար է, որ մեր համայնքի հողի վրա մարդիկ խանութներ են կառուցել, տարբեր գործունեություն ծավալող ինչ-որ օբյեկտներ և հիմա էլ ուզում են օրինականացնել շատ ցածր գներով: Սեփական տների մասով՝ մենք շատ արագ փորձում ենք այս հարցը լուծել, որպեսզի հետագայում կոռուպցիոն սխեմաներ չնկատվեն: Փորձում ենք անել ամեն ինչ, որպեսզի այդ ոլորտը մաքսիմալ մաքրվի: Կարծում եմ **470%**-ով գերակատարել պլանը դա բավականին մեծ արդյունք է:

Մարկոս Հարությունյան

-Ես այդ թվերից, իհարկե, տեղյակ եմ, ողջունելի է, բայց մյուսներին էլ պետք է անդրադառնալ պարոն քաղաքապետ, որովհետև, եթե չեմ սխալվում **8300** ինքնակամ կառուցված կոմերցիոն տարածք կա Երևան քաղաքում: Պատկերացնում եք, եթե որոշենք **8300** տարածքին էլ հավասարապես վերաբերվենք՝ բոլորն օրինականացնենք կամ բոլորը քանդենք: Անկեղծ եմ ասում, ես ոչ մի շահագրգռվածություն չունեմ այս հարցով, ուղղակի լավ հասկանում եմ, որ պետք է քաղաքը մաքրել այն մթնոլորտից, որը նախկինում եղել է, որպեսզի հետագայում ուրիշներին չմեղադրենք: Ամեն անգամ չէ, որ Երևանի ավագանու անդամ ենք լինելու:

Երկրորդ հարցս հնչեցնեմ. «Թափառող կենդանիների վնասագերծման կենտրոն» ՀՈԱԿ-ի աշխատանքը Դուք գնահատում եք լավ՝ մի քանի անգամ եղել է նիստերի ժամանակ պարոն քաղաքապետ: Իմ կարծիքով ծայրամասերում այդ կազմակերպությունը լավ չի աշխատում, որովհետև այն վիճակը, որ ես տեսել եմ Աջափնյակում, երբևէ չի եղել:

Ես տեղեկացրել եմ «Թափառող կենդանիների վնասագերծման կենտրոն» ՀՈԱԿ-ի տնօրեն պարոն Բեգոյանին և նա պատասխանել է, որ միգրացիա է եղել: Կեսկատակ, կիսալուրջ, բայց ուզում եմ հասկանանք, թե միգրացիան որտեղից է եղել:

Պարոն քաղաքապետ մենք ամեն օր զանգ ենք ստանում, երկու ժամ առաջ էլ մեր խմբակցություն զանգ է եղել, որ Բագրատունյաց փողոց **h.10** հասցեում շունը կծել է քաղաքացուն:

Հայկ Մարության

-Շնորհակալ եմ, հարցը շատ տեղին է, պարոն Բեգոյանն էլ է ճիշտ ասում, ինչքան էլ թվում է, թե կատակ է: Երբևիցե որևէ երկրում, որը հաղթահարել է այս հարցը, միայն մեկ

համայնքով չի լուծվել: Պետք է բոլոր համայնքներն այդ գործողությունն իրականացնեն, որպեսզի տեսնենք դրա արդյունքը:

Այո, այդ միգրացիան կա, և այո, հենց ծայրամասերում՝ ավելի մոտիկ գյուղերից միգրացիան լինելու է, որովհետև այդ համայնքները չեն իրականացնում այդ գործողությունները: Դա մեր խնդիրն է, ասեմ ավելին՝ մեր կազմակերպությանը պատվիրում են, գնում են այնտեղ աշխատանք են կատարում, բայց միննույն է մեր հզորությունը բավականացնում է Երևանի համար:

Ես, որ ասում եմ լավ է աշխատում, այսպես եմ գնահատում՝ միջազգային կազմակերպություններ կան, սանդղակներ կան, որոնցով սահմանված է, որ շաբաթական որոշակի քանակի շուն ստերջացնելը, շուն բռնելը և այլն, համարվում է լավ: Ես ոչ թե ասում եմ, որ հարցը լուծված է և շուն չկա, այլ այդ սանդղակներով, միջազգային ստադարտներին համապատասխան մեր կազմակերպությունը լավ է աշխատում:

Ցավոք սրտի, այո, հարակից հատվածներից, որտեղ չի իրականացվում այդ գործընթացը, շները գալիս են քաղաք, որովհետև այստեղ ուտելիքն ավելի շատ է: Մենք լուրջ խնդիր ունեինք ամռանը, երբ աղբահանությունը լավ չէր կատարվում: Շները ոհմակներ էին կազմում և որսի դուրս գալիս, երբ կար աղբահանության հարց, նրանք ուտելիք ունեին և ավելի քիչ ագրեսիվ էին: Հիմա այն շները, որոնք ստերջացված չեն ավելի ագրեսիվ են, որովհետև աղբահանությունը լավ է կատարվում և նրանց համար ուտելիք չկա: Այս հարցին կամաց-կամաց տալու ենք լուծում և ունենալու ենք արդյունք: Ամենակարևորը, որ մենք շների սպանողով չենք զբաղվում:

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության հետ նույնպես քննարկում ենք այս հարցը, որ մյուս համայնքները նույնպես սկսեն այս աշխատանքները, որպեսզի այնտեղից շները չգան Երևան քաղաք: Սա միգրացիա է, և ես համաձայն եմ, որ այն կա և դա հումոր չէ:

Մարկոս Հարությունյան

-Շնորհակալություն պարոն քաղաքապետ:

Հայկ Մարության

-Հաջորդ հարցը՝ ԼՈՒՅՍ խմբակցության ղեկավար Դավիթ Խաժակյան, խնդրեմ:

Դավիթ Խաժակյան

-Շնորհակալություն: Պարոն քաղաքապետ, կրկին անդրադառնալով Ձեր այսօրվա ճեպագրույցին, երբ նշեցիք, որ քաղաքապետարանն ամենաթափանցիկ գործող կառույցն է, ես, իսկապես, շատ զարմացա: Քաղաքապետարանի աշխատակազմի կոմունալ տնտեսության վարչության պետին ազատել աշխատանքից այն պարագայում, երբ նույն օրը

լրատվամիջոցը գրել էր մի երևույթի մասին, որը մեղմ ասած խրախուսելի չէ, և դրա վերաբերյալ հանրությանը բացատրություն չտալը, կարծում եմ արդարացված չէ:

Հարցադրումս հետևյալն է. երբ պարոն Խաչիկյանն ազատվեց աշխատանքից իր դիմումի կամ Ձեր հորդորի համաձայն, արդյոք դա պայմանավորված էր երկու տարբեր գնումներում պարոն Խաչիկյանի հարազատ քրոջ որդու մասնակցության հետ, թե ոչ:

Հայկ Մարության

-Շնորհակալ եմ պարոն Խաժակյան, խոսելով թափանցիկության մասին, ես վերահաստատում եմ իմ ասածը: Ես կարծում եմ քաղաքապետարանն իրոք ամենաթափանցիկն է ն՝ լավ, ն՝ վատ իմաստով: Լավ իմաստով այն, որ մեր բոլոր որոշումները, մեր բոլոր գործողությունները մենք տեղադրում ենք քաղաքապետարանի կայքում, դրա մասին տեղեկանում են բոլորը: Քաղաքապետի յուրաքանչյուր որոշման, յուրաքանչյուր քայլի մասին հանրությունը տեղեկացված է, մենք դրա մասին իրազեկում ենք, խոսում ենք, տարբեր հարցազրույցներում ներկայացնում ենք:

Մենք իրականում թաքցնելու ոչինչ չունենք, այս պահին շատ ազատ ենք գործում և այդ ազատությունը հնարավորություն է տալիս թափանցիկ գործել, ոչ մի խնդիր չունենք պահելու որևէ բան: Թափանցիկության մյուս մասը, դա այն է, որ յուրաքանչյուր տիպի տեղեկատվության արտահոսք է լինում քաղաքապետարանում: Այս մասին ես պետք է խոսեմ իմ նորանշանակ խորհրդականի հետ, որպեսզի հասկանանք այս արտահոսքը որտեղից է:

Ի վերջո սա պետական մարմին է և այսպես թե այնպես աշխատում ենք թափանցիկ, բայց աշխատանքային թղթերի արտահոսքը կամ չճշգրտված տեղեկատվությունները, դրանք միայն խանգարում են աշխատանքին:

Պարոն Խաչիկյանի հետ կապված կարող եմ ասել, որ դա մի քանի գործընթացների խառնուրդ է: Ես այլևս նպատակահարմար չգտա, որ նա շարունակի իր աշխատանքը Երևանի քաղաքապետարանում:

Դավիթ Խաժակյան

-Դուք թափանցիկորեն հարցիս չպատասխանեցիք, որովհետև հարցադրումս շատ հստակ էր՝ կապ ուներ արդյոք պարոն Խաչիկյանի ղեկավարած հանձնաժողովի մրցույթը Ձեր այդ որոշման հետ:

Հայկ Մարության

-Ես կարծում եմ իմ պատասխանից ամեն ինչ պարզ էր:

Դավիթ Խաժակյան

-Շատ լավ: Երկրորդ հարցս վերաբերում է Հին Երևանի կառուցապատմանը: Մենք գիտենք, որ առկա է ՀՀ կառավարության որոշում, որը որոշակի սահմանափակումներ է

սահմանել այդ կառուցապատման հետ, մասնավորապես՝ երեք վերգետնյա հարկ, երկու ստորգետնյա հարկ: Հիմա երբ այնտեղ նայում ենք, այդ երեքը շատ ավելի գերազանցած է:

Հարցս հետևյալն է՝ առկա է արդյոք վերգետնյա կառուցապատման շինթույլտվություն Հին Երևանի տարածքում այն շենքերի, որոնք կառուցվում են: Եվ եթե առկա է, ե՞րբ է այն տրվել և ինչպե՞ս է ստացվել, որ այն կառավարության այդ որոշմանը գերազանցել է:

Հայկ Մարության

-Հարցին կպատասխանի Երևան քաղաքի գլխավոր ճարտարապետ Արթուր Մեսչյանը:

Արթուր Մեսչյան

-Շնորհակալություն հարցի համար: Հին Երևանի վերաբերյալ կհայտնեմ հետևյալը. ՀՀ կառավարության որոշմամբ **3+1** է տրված, այսինքն՝ երեք հարկ և մանսարդ: Այսօրվանից ընթացքը տրվել է, որովհետև վերջապես նախագծի հեղինակը՝ գլխավոր ճարտարապետը, ստորագրել է կառուցապատողի հետ պայմանագիրը և հիմա ավելի ակտիվ կսկսվի աշխատանքը: Դա նշանակում է, որ, բնականաբար, տվյալ դեպքում ոչ մի շինարարական թույլտվության մասին խոսք լինել չի կարող, քանի որ ճարտարապետը նոր է իրավական դաշտում սկսել նախագծային աշխատանքները:

Ինչ վերաբերում է այն մի քանի կառույցներին, որոնք սկսել էին շինարարությունը, Բուզանդի փողոցի կողմից բավականին բարձրացել է, երկար պատմություն ունեցավ: Այդ կառույցի համար երկար ժամանակ ՀՀ մշակույթի նախարարությունը չէր հաստատում նախագիծը, ապօրինի շինարարության կարգավիճակի մեջ էր: Վերջնական նախագծի հաստատումը կլինի այն ժամանակ, երբ ճարտարապետը կներկայացնի գոնե էսքիզային փուլի վերջնական նախագիծը: Քանի որ հիմա հուշարձանները պահպանվում են, և ստորգետնյա ավտոկանգարի նկարվածքը փոխվում է, բոլոր այդ նախագծերը, մեկ առ մեկ պետք է դրվեն մեր սեղանին, մեկ առ մեկ սկսվի աշխատանքը: Իմ պատասխանը հետևյալն է, որ համալիր նախագծի ոչ մի շինթույլտվություն չի եղել, նույնիսկ նախագծային թույլտվություն վերջնական տրված չէ:

Դավիթ Խաժակյան

-Շնորհակալություն պարոն Մեսչյան, հենց հարցադրումս դրան էր վերաբերում, որովհետև ինձ բազմաթիվ դեպքերով դիմել են երկրորդ, երրորդ գծում կառուցապատում իրականացնող անձինք, ովքեր իրենց սեփական տունն են կառուցում **60-70**քմ և չեն սահմանազատել այդ տարածքը, իրենց տուգանել են: Դիմում են ինձ, ես ասում եմ, որ եթե խախտում է, պետք է տուգանվեք և այդ մարդիկ տուգանվել են: Հիմա ես տարակուսած եմ: Եթե հետ ենք գնում, տեսնում ենք, որ **2018**թ. սկսել է այդ շենքը բարձրանալ: Հիմա մայրաքաղաքի կենտրոնում՝ Հանրապետության հրապարակի հետևում, այս գործընթացը

տեղի է ունեցել և շարունակում է տեղի ունենալ: Հիմա այդ գործընթացը, շինարարությունը, որ դուք չեք կասեցրել, ինչո՞վ է պայմանավորված:

Հայկ Մարության

-Պարոն Խաժակյան բացառում եմ նման դեպք, որ առանց շինությունվության լինի կառուցապատում: Իմ կողմից հստակ հանձնարարական կա, որ չի կարող լինել որևիցե մեկը ով կարող է խախտել օրենքը: Շատ հաճախ լինում է, երբ գնում են արձանագրում: Առաջին արձանագրումը լինում է, մինչև երկրորդն անում են, այս ընթացքում ինքն, այնուամենայնիվ, խախտելով օրենքը, հասցնում է շարունակել:

Հարցի վերաբերյալ ավելի մանրամասն կներկայացնի Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողի վերահսկողության վարչության պետ Ռոբերտ Դարբինյանը:

Ռոբերտ Դարբինյան

-Շնորհակալություն: Այս պահի դրությամբ միայն կարող եմ բացատրել, որ որևէ ապօրինի կառուցապատում մեր ուշադրությունից դուրս է: Կոնկրետ նշված հատվածի հետ կապված այս պահին կղժվարանամ ստույգ պատասխանել, բայց բացառում եմ, որ եթե շինարարությունը եղել է ապօրինի, այդ ուղղությամբ վարչարարություն չի կատարվել: Լրացուցիչ կուսումնասիրեմ և վաղը պարոն Խաժակյանին կտեղեկացնեմ մանրամասները:

Հայկ Մարության

-Խնդրում եմ անպայման տեղեկացրեք պարոն Խաժակյանին:

Հայկ Մարության

-Հաջորդ հարցը՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ Գայանե Մելքոմ Մելքոմյան, խնդրեմ:

Գայանե Մելքոմ Մելքոմյան

-Շնորհակալություն, հարցիս վերաբերյալ մեկ անգամ արդեն խոսել եմ Կենտրոն վարչական շրջանի ղեկավար պարոն Պողոսյանի հետ, բայց կցանկանայի ևս մեկ անգամ բարձրաձայնել խնդրի մասին: Խոսքը վերաբերում է Թումանյան փողոց հ. 30 հասցեի բակում, որտեղ բնակիչը խնդիր ունի, կասեցված շինարարության շինհրապարակին: Բավականին երկար գործընթաց է անցել այս հարցը, 1, 2 մետր տարածքի խնդիր է, այսինքն՝ շինհրապարակի սահմաններից դուրս է եկել կառուցապատողը: Արդեն մեկ տարի շարունակ մենք չենք կարողանում այս տարածքն ազատագրել:

Գիտեմ, որ քաղաքաշինության և հողի վերահսկողության վարչությունն ամենօրյա ռեժիմով շատ ինտենսիվ զբաղվում է այդ հարցով, շատ գոհ եմ իրենց աշխատանքից, բայց կարծում եմ վարչական շրջանի աշխատակազմն էլ հնարավորության դեպքում պետք է

միջամտի հարցի լուծմանը: Մա մի փոքր հարց է, որը մենք ոչ մի կերպ չենք կարողանում լուծել: Կցանկանայի տեղեկանալ ինչ է հնարավոր անել այս ուղղությամբ կամ ինչ նորություններ կան հարցի վերաբերյալ:

Հայկ Մարության

-Շնորհակալություն, հարցին կպատասխանի Կենտրոն վարչական շրջանի ղեկավար Ավետ Պողոսյանը, խնդրեմ:

Ավետ Պողոսյան

-Շնորհակալություն, Դուք ճիշտ եք, վարչության հետ ինտենսիվ աշխատում ենք, կարծում եմ մոտակա օրերին կունենանք վերջնական պատկերը, թե արդյոք շինհրապարակի սահմանագատումը ճիշտ է արված, թե ոչ: Խնդիրը կայանում է դրանում և քանի որ խոսքը փոքր հատվածի մասին է. մեկ կամ տվյալ դեպքում նույնիսկ կես մետր տարածք է, այդ պատճառով մի փոքր երկարում է ավելի հստակ գործողություններ իրականացնելը: Մոտ օրերին հարցի լուծումը կտրվի:

Գայանե Մելքոմ Մելքոմյան

-Շնորհակալություն, իմ հարցը կոնկրետ նպատակ ունեւ, որովհետև այս հարցի հետ կապված բնակիչը, կարծես թե հուսալքվել է: Դրա համար ես, իմանալով ինչ իրավիճակ է, անընդհատ կապի մեջ եմ նաև վարչության հետ, ցանկանում էի նիստերի դահլիճում ևս բարձրաձայնել, կրկին անգամ վստահեցնելու, որ կգանք հանգուցալուծման:

Ինչպես նաև, որպես վարչական շրջանի նորանշանակ ղեկավար, բնակիչը ցանկանում էր Ձեր խոսքը ևս լսել, որովհետև աններելի երկար է ձգվում այդ հարցի լուծումը: Շնորհակալ եմ, որ կզբաղվեք հարցի լուծմամբ և խնդրում եմ, որ հետևողական լինեք: Ես ենթադրում էի, որ մինչև Նոր տարի այդ հարցը կկարողանանք լուծել, բայց փաստորեն Նոր տարին էլ է անցնում: Հուսամ, որ շատ երկար չի տևի, շնորհակալություն:

Ավետ Պողոսյան

-Այո, իհարկե, տիկին Մելքոմ Մելքոմյան, հարցը մեր անմիջական վերահսկողության տակ է: Կարծում եմ նույնիսկ մինչև Նոր տարի մենք առնվազն տեղեկատվության մակարդակով վերջնական պատկերը կունենանք:

Հայկ Մարության

-Հաջորդ հարցը՝ ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության անդամ Արմեն Ներսիսյան, խնդրեմ:

Արմեն Ներսիսյան

-Պարոն քաղաքապետ Ձեր հնգամյա ծրագրերի մեջ Երևանի ծայրամասերում երեխաները վերջապես կտեսնեն^օ իրենց խաղահրապարակները: Խոսքը վերաբերում է

Խարբերոյ, Նորագավիթ, Նորագյուղ, Ջեյթուն տարածքներին: Կարծում եմ նրանք նույնպէս պետք է իրենց բակերում խաղահրապարակներ ունենան:

Հայկ Մարության

-Հարցին կպատասխանի քաղաքապետի առաջին տեղակալ Հրայր Մարգարյանը, խնդրեմ:

Հրայր Մարգարյան

-Պարոն քաղաքապետ հարցի հետ կապված արդէն հայտարարել ենք, որ «Ակտիվ քաղաքացի» հարթակի շրջանակներում ամփոփվել են այն մասնակիցները, ովքեր հաղթող են ճանաչվել: Կարող եմ հայտնել, որ Ձեր նշած տարածքներից Քանաքեռ-Ջեյթուն վարչական շրջանում գտնվող տարածքում բավականին մեծ խաղահրապարակ կա, ինչպէս նաև Հաղթանակ թաղամասում կա: Նորագավթում, եթէ չեմ սխալվում, նախագծման աշխատանքներ են իրականացվում, այնտեղ նույնպէս կունենանք խաղահրապարակ:

Հայկ Մարության

-Շնորհակալություն, հաջորդ հարցը՝ ԼՈՒՅՍ խմբակցության անդամ Անի Խաչատրյան, խնդրեմ:

Անի Խաչատրյան

-Շնորհակալություն, ՀՀ կառավարության հ. 797 որոշում կա, որով ոստիկանությունը պետք է իր լիազորությունները կատարի ապօրինի գրավված տարածքների հետ կապված: Կան նաև նորմատիվ ակտեր, որտեղ պարտադրվում է ունենալ պարիսպ: Այդ նորմատիվ ակտերը պարտադրվում են նաև պարոն Բլեյանին, քանի որ իր ղեկավարած կազմակերպությունը նույնպէս պետական է, ինքն էլ պետք է ունենա այդ պարիսպը: Ես պարտադրելու եմ իրեն ունենալ այդ պարիսպը:

Երեկ պարոն Վիրաբյանը, վարչության պետերը, Ձեր մամլո խոսնակը, բոլորն այնտեղ էին, ես, ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության ավագանու անդամները, բայց լույսը բացվել է և, պայմանավորվածությունը խախտելով, ինչ-որ երկաթից քանդակներ է բերել, շարել այնտեղ: Ես ահազանգ եմ տվել ոստիկանություն, նրանք քաղաքապետարանի, թե վարչական շրջանի աշխատակիցների հետ գնացել և ապամոնտաժել են դա: Այս ամենի վերջը պետք է դրվի:

Երեկվանից խոսակցություն էր գնում նոր նախագիծ անելու մասին, այսինքն մենք մանկապարտեզի բյուջեից ամբողջ օրը Բլեյանի բիզնեսի համար պետք է նախագիծ անենք, ի՞նչ է հարմարվենք: Ճանապարհ ենք սարքում. այդ հարակից տարածքում, վարչական շրջանի ղեկավար պարոն Կարապետյանն էլ կարող է հաստատել, ես քաջ ծանոթ եմ տարածքին, մանկապարտեզի բոլոր կողմերով գրեթէ այդ հարակից անցումները կան: Այդ ճանապարհը քաղաքացիներին ընդհանրապէս պետք չէ, իլլել մանկապարտեզի տարածքից,

ինչ է Բլեյանի հաճույքն ենք անում, դա նորմալ չէ: Կա քաղաքապետի որոշում, կա քաղաքապետի շինթույլտվություն և նորմալ չէ, որ ոստիկանությունը չի գալիս պարոն Բլեյանին բերման ենթարկի կամ տեղափոխի մի այլ վայր և մենք օրենքով սահմանված մեր անելիքն անենք: Ես չգիտեմ ոստիկանապետը կլսի, թե չի լսի, բայց ինքը պարտավոր է կատարել ՀՀ կառավարության հ. 797-Ն որոշումը:

Պարոն քաղաքապետ ես չգիտեմ, այսինքն Դուք ունեք որոշում, որը չենք կարողանում իրագործել, ի՞նչ ենք անելու: Պարոն Վիրաբյան բլրից ներքև չի լինելու պարիսպը, պարիսպը լինելու է այն տեղից, որտեղից եղել է նախագիծը, որի համար մեր մանկապարտեզը գումար է ծախսել՝ երեխաների համար նախատեսված գումարից, նախագիծ է արել և այդ նախագծով էլ իրականացնելու է պարսպապատումը: Նոր նախագիծ չի լինելու, ես պարոն Բլեյանին զգուշացնում եմ:

Պարոն քաղաքապետ դիմեք ոստիկանությանը կամ այլ միջոց ձեռնարկեք, այստեղ արդեն երեխաների անվտանգության լուրջ խնդիր ունենք:

Հայկ Մարության

-Շնորհակալ եմ տիկին Խաչատրյան, ես քաջ տեղյակ եմ, որ երեկ բավականին մեծ պատվիրակություն է եղել այնտեղ, բանակցություններ են եղել և գիտեմ, որ եկել ենք ընդհանուր հայտարարի:

Հարցին կանդրադառնա քաղաքապետի տեղակալ Տիգրան Վիրաբյանը, խնդրեմ:

Տիգրան Վիրաբյան

-Շնորհակալություն հարցի համար տիկին Խաչատրյան: Կան համապատասխան գերատեսչությունների որոշումներ, նորմատիվ ակտեր, որոնցով կարգավորվում են նախադպրոցական հաստատություններ հաճախող երեխաների անվտանգության նորմերը: Մենք, բնականաբար, կարող ենք պատասխանել միայն այն հաստատությունների համար, որոնք ենթարկվում են Երևանի քաղաքապետարանին և Երևանի քաղաքապետարանի լիազորությունն է: Միայն այդ հաստատությունների համար կարող ենք տալ պատասխան կամ պահանջել կատարել նորմատիվ ակտերը:

Ինչ վերաբերում է տվյալ մանկապարտեզներին. նախ խնդիրն այնտեղ է, որ մանկապարտեզների ցանկապատերը գոյություն չունեն արդեն մի քանի տարի: Այդ մանկապարտեզի տնօրենները մի քանի տարի չեն անդրադարձել, թե ինչու այս տարածքներում գոյություն չունի պարիսպ և ինչու իրենք չեն կատարում նորմատիվ այն ակտերը, որոնք իրենցից պահանջվում է՝ երեխաների անվտանգությունն ապահովելու համար: Ժամանակի ընթացքում այդ տարածքով երեխաներին բերել են դպրոց, տվյալ դեպքում Բլեյանի դեկավարած դպրոցը: Ի դեպ այդ դպրոցը նույնպես երևանցիներ են

հաճախում, այդ դպրոցը նույնպես պետական միջոցներից է սնվում և պատվիրակված լիազորություն է անում: Այդ մանկապարտեզի մի հատվածը, որն ուղղակի օգտագործելի չէ, դարձել է ճանապարհ, որտեղով երեխաներին տանում են տվյալ դպրոց: Քննարկումների արդյունքում կար խոսակցություն, որ այո, չի կարող չկատարվել այն պահանջները, որոնք անվտանգության կանոններին են վերաբերում, բայց նաև կարելի է տալ կոմպրոմիսային լուծում, թողնելով, որ մյուս դպրոցի երեխաներն ունենան դպրոց գնալու ճանապարհ: Եվ եթե այդ ճանապարհը դարձել է ճանապարհ՝ 5 տարվա ընթացքում չօգտագործվելու արդյունքում, ապա այդ հողատարածքը, մնալով տվյալ մանկապարտեզի կադաստրային չափագրման մեջ, օգտագործվի որպես ճանապարհ, որից կօգտվեն նաև տվյալ մանկապարտեզի երեխաները: Մի քանի ամիս շարունակ այս վեճը կար, խոսակցությունները կային, թույլտվությունը կար, քննարկումներ էին տեղի ունենում, թե ինչպես պետք է երեխաները գային:

Նախ այս երկու մանկապարտեզների և երկու կրթական հաստատությունների միջև շատ վատ փոխհարաբերություններ են, կրթական ոլորտին ոչ հարիր փոխհարաբերություններ են, չանդրադառնամ թե ի սկզբանե խնդիրը որ կողմից է եկել: Շատ ամոթ է մեզ համար, որ այսօր մեր կրթական հաստատություններում, անկախ նրանից թե դրանք ում ենթակայության տակ են գործում, ունենք նման հարաբերություններ:

Երեկ մենք տեղում հանդիպել ենք պարոն Բլեյանի հետ: Հանդիպմանը ներկա էին ավագանու անդամներ, վարչական շրջանի ղեկավարը, վարչության պետեր, նաև Դուք եկաք հանդիպմանը: Մենք պայմանավորվել ենք, որ այդ ճանապարհի մի մասը, որը երթևեկելի է և երեխաները գնում են այդ հատվածով, մնալով մանկապարտեզի կադաստրային տարածքի մեջ, ոչ մեկի չենք հանձնում այն, ցանկապատը կկառուցենք այս կողմից, այն բարձրությամբ, որը պահանջվում է: Այդ ցանկապատը կառուցելով մանկապարտեզի տնօրենները վերջապես, 5 տարի հետո, կլուծեն իրենց բուն պարտականությունը: Այդ տնօրեններին դրանից հետո, բնականաբար, հարց կտամ, թե նախորդ 4 տարիների ընթացքում ինչու չեն բարձրացրել այս հարցը: Հիմա իրենք, որ իրենց իրավունքները պաշտպանում են ես շատ ուրախ եմ, բայց այդ խնդիրը կար նաև տարիներ առաջ և նույն երեխաներն ունեին անվտանգության խնդիր նաև այդ ժամանակ: Մենք լուծելու ենք այդ խնդիրը, որովհետև դա պահանջ է, որը մենք պետք է կատարենք:

Ինչ է տեղի ունեցել այսօր. ես խոսել եմ պարոն Բլեյանի հետ, երբ ստացել եմ տվյալ տարածքում տեղադրված երկաթե քանդակների լուսանկարները: Պարոն Բլեյանն ասում է, որ երեկվա ձեռք բերված բոլոր պայմանավորվածություններն ուժի մեջ են, իրենք որևէ խնդիր չեն տեսնում և չեն կարող տեսնել մանկապարտեզը ցանկապատելու հետ: Դրանք տարածքում դրվող ամանորյա զարդարանքներ են, որոնք ունենալու են լուսային ձևավորում

և դրանք ժամանակավոր են: Դրանք Վիզեն Ավետիսի քանդակներն են երկաթի տեսքով, որոնք այդ տարածքին, ժամանակավոր, որպես ձևավորման լուծում, չեն խանգարի: Անկախ նրանից, թե խնդրի մյուս կողմում ով է կանգնած, անկախ ազգանունից, զբաղեցրած պաշտոնից և դիրքից, մենք և մեր ենթակայության կազմակերպությունները պարտավոր են իրականացնել այն բոլոր նորմատիվ ակտերը, որոնք ընդունվել են համապատասխան գերատեսչությունների կողմից և վերաբերում են երեխաների անվտանգությանը: Սակայն, եթե կա հարցի լուծման կոմպրոմիսային տարբերակ, իսկ հակառակ կողմը սեփականատեր չէ, որ ցանկանում է իր տունը **1** մետր առաջ տալ, նորից երեխաներն են, ովքեր գնում են դպրոց կամ մանկապարտեզ: Երևանցիներ են, ովքեր այս պարագայում կարևոր չէ, թե ում լիազորության ներքո են գործում, պետական որ գերատեսչության:

Ցանկապատը լինելու է, այն կառուցվելու է բոլոր այն նորմերով, որոնք պահանջվում են և դրա կառուցմանը որևէ մեկը չի խոչընդոտելու: Այսօր մեր խոսակցության ընթացքում ևս մեկ անգամ վերահաստատել ենք, որ ձեռք բերված պայմանավորվածությունն ուժի մեջ է և ցանկապատը կառուցվելու է:

Անի Խաչատրյան

-Կրկնում եմ, Բլեյանի բիզնեսի համար, շեշտեմ, որ վճարովի է այդ հաստատությունը, մենք համայնքային մանկապարտեզի տարածքից ինչ-որ զիջումներ ենք անում:

Պարոն Վիրաբյան, այն տեղերը, որտեղ դրված էին այդ սյուները, եթե այդտեղից ուրիշ կողմ փորձվի կառուցվել ցանկապատը, խոստանում եմ շատ մեծ ադմուկ և **250** ծնողի պայքար: Դուք մեջբերեցիք քանդակագործ Վիզեն Ավետիսի անունը, ով աշխատում է Բլեյանի մոտ, ով երեխաների ծնողներին ինչ ասես, ասում էր, հրապարակումները մամուլում կան: ՀՀ առողջապահության նախարարության կողմից կան երեխաների անվտանգության համար սահմանված հատուկ նորմեր: Քանդակները, որոնք Դուք ասում եք ամանորյա զարդարանք են, այդ երկաթյա զարդարանքների մեջ կային բավականին խնդրահարույց մասեր, որոնց երեխաները կարող էին կպնել, վնասվել: Այդտեղ էլ կան նորմեր, որոնք չեն պահպանվել: Ես նորից եմ կրկնում՝ Բլեյանի բիզնեսի համար համայնքից հող չի զիջվելու:

Ինչ վերաբերում է Ձեր ասածին, որ այն հաստատությունները, որոնք մեր ենթակայության տակ չեն, մենք իրենց չենք կարող ոչինչ պարտադրել: Այո, Դուք չեք կարող, բայց ես կարծում եմ, որ այստեղ Ազգային անվտանգության ծառայությունը լուրջ մտահոգություն պետք է ունենա: Մի քանի օր առաջ, վարչապետն ուղիղ եթերով խոսեց մեքենա պարտադրելու մասին իր մեծ դստերը, այստեղ մանկապարտեզ է հաճախում նրա փոքր դուստրը: Բլեյանի կրթական հաստատությունում պարիսպներ չլինելը վարչապետի

փոքր դասեր համար անվտանգության խնդիր է առաջացնում: Այդ հարցով, կարծում եմ, Ազգային անվտանգության ծառայությունը պետք է զբաղվի:

Տիգրան Վիրաբյան

-Տիկին Խաչատրյան, անդրադառնալով թեմային՝ ուզում եմ նախ ամրագրենք **250** ծնողի բողոքը, որ նշում էք, պետք է Ձեզ հիասթափեցնեմ, քանի որ այն կոմպրոմիսային լուծումը, որ ներկայացրեցի, քննարկվել է ծնողների հետ: Երկու հանդիպում ենք ունեցել իրենց հետ, մեկը տեղի է ունեցել Երևանի քաղաքապետարանում, մյուսը՝ իմ արձակուրդի ընթացքում, երբ խնդիր էր առաջացել, ես ոչ պաշտոնական հանդիպում եմ ունեցել թիվ **93** մանկապարտեզում: Անգամ վարչական շրջանի ղեկավարը հրավիրված չի եղել, քանի որ ծնողները խնդրել էին հանդիպում, խնդրի լուծում այս տարբերակով: Մենք, եթե չեմ սխալվում, հանդիպել ենք ղեկտեմբերի **4**-ին և միասին, քննարկման արդյունքում, որոշել ենք, որ չենք ցանկանում այս խնդիրը բարդանա: Ծնողներն ընդունել են, որ իրենց խնդիրը միայն իրենց երեխաների անվտանգության հարցն է: Նրանք ընդունել են, որ իրենց համար էական չէ այդ **2** մետրը, որովհետև դա արդեն իսկ օգտագործվում է որպես ճանապարհ:

Ես առաջարկել եմ և իրենց կողմից ստացել եմ համաձայնություն կոմպրոմիսային այդ լուծման համար, որպեսզի խնդիրը չտանենք փակուղի, որպեսզի այս կողմից երեխաները դուրս չգան, մյուս կողմից դպրոցի աշակերտները: Այսպիսով, խնդիրը գնա կոմպրոմիսային լուծման երկու կողմերի համար ընդունելի տարբերակով: Ծնողները համաձայնվել են խնդրի լուծման այս տարբերակին և ես ցանկանում եմ փաստել մի բան, որ նրանք կարող են պահանջել միայն իրենց երեխաների անվտանգության ապահովումը: Անվտանգության ապահովման հարցը կիրականացվի համայնքային բյուջեից, քաղաքային, թե պետական, կամ կադաստրային չափագրման հարցը, եթե ծնողները փորձեն պահանջել, մենք չունենք դրա բացատրությունը և դրա անհրաժեշտությունը: Իրենք անվտանգ երեխաներին բերում են մանկապարտեզ, դա է կարևորը: Ի դեպ չեմ հասկանում ինչու վերջին **5** տարիների ընթացքում այս հարցով, ցավոք սրտի, չէին բողոքում, որովհետև ժամանակին երևի հարցը լուծված կլիներ կամ գիտեին, որ չի լուծվելու, դրա համար չէին բողոքում:

Այսօր մենք որևէ կաշկանդվածություն չունենք այս հարցը լուծելու, անկախ այն մարդկանցից, ովքեր ղեկավարում են մյուս կառույցը: Մենք նորմերը պահելու ենք, ցանկապատը կառուցելու ենք և դա անելու ենք առանց կռվի և պատերազմի, փոխադարձ հարգանքի մթնոլորտում և հարմարավետության արդյունքում: Այնտեղ մնում է ճանապարհ, չի դառնում ոչ մեկի սեփականությունը և Բլեյանի դպրոց հաճախող երեխաներն օգտվելու են այդ ճանապարհից, ովքեր նույնպես մեր համաքաղաքացիներն են:

Ինչ վերաբերում է Վիգեն Ավետիսի քանդակներին, անկեղծ եմ ասում, ինձ համար բացարձակ էական չէ, թե արվեստագետը միջանձնային հարաբերություններում ինչպես է իրեն դրսևորում: Տվյալ դեպքում, ես գնահատում եմ արվեստագետի կատարած աշխատանքը՝ քանդակները, որոնք շատ հետաքրքիր լուծումներ ունեն: Չեմ կարող զուտ մարդկային բնութագրից դուրս գալով, որոշակիորեն խնդիրներ ունենալ իր ստեղծագործությունների հետ, իսկ դրանք ժամանակավոր են և երբ զա ժամանակն ապամոնտաժվելու են:

Անի Խաչատրյան

-Սպասենք մեկը վնասվի, նոր կապամոնտաժենք:

Անցնեմ հաջորդ հարցիս. Կենտրոն վարչական շրջանի ղեկավար պարոն Պողոսյանին մամուլը հարց էր հղել, որից նա հնարավորինս խուսափել էր, բայց կարծում եմ Երևանի ավագանու կանոնադրությունը կարդացել է և պարտավոր է ավագանու անդամների հարցերին պատասխանել այս դահլիճում: Երբ պարոն Պողոսյանը նշանակումից հետո, առաջին օրը եկել է աշխատանքի, ինչ պատճառով է աշխատանքից հեռացրել վարչական շրջանի ղեկավարի տեղակալին: Ի դեպ ասեմ, ովքեր չգիտեն, տեղակալն Ազգային ժողովի փոխնախագահ Ալեն Սիմոնյանի կնոջ հայրն էր, նոր էր նշանակված, հին կադրերից չէր, այսինքն նոր իշխանության նշանակում էր: Ի՞նչ պատճառով, ինչի՞ն էր խանգարում պարոն Մարգարյանը, որ պարոն Պողոսյանն իր նշանակման առաջին օրը հեռացրել է նրան:

Հայկ Մարության

-Շնորհակալություն, հարցին կպատասխանի Կենտրոն վարչական շրջանի ղեկավար Ավետ Պողոսյանը, խնդրեմ:

Ավետ Պողոսյան

-Տիկին Խաչատրյան, նախ ես նորից մեկնում եմ իմ բարեկամական ձեռքը: Ինչ վերաբերում է հարցին, Դուք սխալ գիտեք, ես որևէ մեկին իմ նշանակման օրվանից չեմ ազատել աշխատանքից, շնորհակալություն:

Անի Խաչատրյան

-Ինչպես միշտ խուսափեցիք, որովհետև ասելիք չունեք: Նույն պատասխանը տվել եք նաև մամուլին, որը Ձեզ հարց է հղել, բանավոր պատասխանելուց խոսափել եք, այնուհետև գրավոր պատասխանից էլ եք խուսափել:

Պարոն Պողոսյան, ասեմ, որ ես Ձեր բարեկամական առաջարկը չեմ ընդունում: Այս պահից սկսած Ձեզ մարտահրավեր եմ նետում այլ հարթակում, շնորհակալություն:

Ավետ Պողոսյան

-Շատ լավ տիկին Խաչատրյան:

Հայկ Մարության

-Հաջորդ հարցը՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ Լիլիթ Կիրակոսյան, խնդրեմ:

Լիլիթ Կիրակոսյան

-Շնորհակալություն, պարոն քաղաքապետ: Վերջերս լրատվականը բավականին ակտիվ անդրադարձավ այն փաստին, որ կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը վարույթ է հարուցել Ձեր աշխատանքների հետ կապված՝ անհամատեղելիության առերևույթ խախտման հիմքով: Ես խնդրում եմ Ձեր մեկնաբանությունն այս հարցի վերաբերյալ, և ուզում եմք հենց Ձեզնից լսել, թե իրականում ի՞նչ է եղել, որովհետև մամուլը տարբեր տեսակի անհիմն տեղեկատվություն է տալիս:

Հայկ Մարության

-Շնորհակալություն տիկին Կիրակոսյան, ճիշտն ասած ես գիտեի, որ այս հարցը հնչելու է, այդ պատճառով խնդրել էի, որ փաստաթղթեր պատրաստեն: Հրապարակում եղավ այն մասին, որ ես հանդիսանում եմ «Երկուս ու կես» ՍՊԸ-ի տնօրեն, որն անհամատեղելի է քաղաքապետի պաշտոնի հետ: Նույն օրը պարոն Կարապետյանը հերքեց այդ տեղեկատվությունը՝ այս փաստաթղթերի լուսանկարները ներբեռնելով համացանց: Կարծես թե հարցը սպառված էր, բայց արի ու տես, որ կոռուպցիայի կանխարգելման նորաստեղծ հանձնաժողովն ուշադրություն չի դարձրել այդ հերքման վրա կամ չի նկատել: Համառորեն վարույթ է հարուցել, որպեսզի ստուգի իրականությանը համապատասխանում է մամուլի այդ հրապարակումը, թե՞ ոչ:

Միանգամից ասեմ, որ դա իրականությանը չի համապատասխանում: Եթե չեմ սխալվում, հենց հոկտեմբերի 10-ին՝ քաղաքապետի պաշտոնն ստանձնելուց առաջ, ես դիմել եմ ՍՊԸ-ի տնօրենի պաշտոնից ինձ ազատելու համար և մի քանի օր անց այդ պաշտոնում նշանակվել է իմ եղբայրը: Ամեն ինչ կատարվել է օրենքի տառին համապատասխան, սակայն այստեղ ունենք երկու խնդիր, նախ, որ կոռուպցիայի կանխարգելման նորաստեղծ հանձնաժողովը ծախսելու է բավական ռեսուրս և ժամանակ այս ամենը պարզելու համար: Այնինչ կարելի էր կատարել նախաքննություն, ինչի ընթացքում մենք նրանց կտրամադրեինք այս փաստաթղթերը, կամ պետական ռեզիստրում կվճարեին **3000** դրամ և կտեղեկանային, որ ես այլևս չեմ զբաղեցնում այդ պաշտոնը, և հարցն այդքանով կհամարվեր փակված: Ես նույնիսկ պատրաստ էի այդ **3000** դրամը վճարել իմ աշխատավարձից՝ նրանց այդ ծախսից ազատելու համար:

Հաջորդ խնդիրը վերաբերում է լրատվամիջոցներին: Հասկանալի է, որ լրատվամիջոցը կարող է ապատեղեկատվություն տարածել, սակայն շատ մտահոգիչ է, երբ դա անում է փաստաթուղթ կեղծելով, ու՞ր մնաց լրագրողական հետաքննությունը: Ամբողջ լրատվական

դաշտում միայն մեկ լրատվամիջոց գտնվեց, որն ինքնուրույն հետաքննություն էր կատարել և հանրությանը ներկայացրել իրականությունը: Ինչո՞վ են զբաղված մյուս լրատվամիջոցները, ի՞նչ են անում նրանք պետականաշինության համար: Մենք նրանց վրա այսօր մեծ խաղաղություններ ենք կատարել, նրանց դերն այսօր չափազանց կարևոր է մեր պետության զարգացման գործում:

Հարգելի լրագրողներ, լրատվամիջոցներ, դուք պետք է օգնեք մեզ, եթե մեկն ապատեղեկատվություն է տարածում, մի փոքր ջանք գործադրեք, հետաքննություն արեք, ձեր կարծիքը հայտնեք: Մի խոսքով այս երկու ոլորտներում իրավիճակը դրական չէ, և կլինդրեմ աշխատել ավելի արդյունավետ:

Լիլիթ Կիրակոսյան

-Շնորհակալություն լիարժեք պատասխանի համար, պարոն Մարության:

Հայկ Մարության

-Հաջորդ հարցը՝ ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության անդամ Հռիփսիմե Առաքելյան, խնդրեմ:

Հռիփսիմե Առաքելյան

-Շնորհակալություն պարոն քաղաքապետ, երկու հարց ունեմ և ուզում եմ պատասխանը բովանդակալից լինի: Նախ ասեմ, որ կանաչապատման հետ կապված ՀՈԱԿ-ի ստեղծմանը դրական արձագանքեցինք, ընդունեցինք այդ որոշումը, հաջորդ տարվանից այն կսկսի գործել: Առաջին հարցս վերաբերում է կանաչապատման ընկերություններին, որոնք գտնվում են վարչական շրջանների ենթակայության տակ: Նախորդ նիստին ևս բարձրաձայնեցի այս հարցը, թե մինչև երբ են այդ ընկերությունների պայմանագրերը: Փոխքաղաքապետ պարոն Մարգսյանը հավաստեց, որ այդ ընկերությունների հետ պայմանագրերը կնքվել են մինչև տարվա վերջ:

Ես հասկանում եմ, որ նոր ՀՈԱԿ ենք ստեղծել և այն աշխատողներին կամաց-կամաց ազատում են աշխատանքից, կամ իրենք են դուրս գալիս, Դուք այս մասով ավելի հստակ կասեք: Ասեմ, որ կանաչապատման այդ ընկերությունների աշխատանքները սարսափելի թերի են, այնպես չէ, որ շատ լավ վիճակում էր, հիմա առհասարակ ոչինչ չեն անում: Նախորդ անգամ նույնպես նշել եմ այս մասին, խոսեցի վարչական շրջանի ղեկավարի հետ, տեղյակ պահեցի, ասեցին, որ հարցին լուծում կտան, սակայն ոչինչ չի արվել:

Ցանկանում եմ տեղեկանալ կանաչապատման մասով ի՞նչ խնդիրներ ունենք այդ ընկերությունների հետ՝ մինչև նոր ՀՈԱԿ-ի գործարկելը, և ո՞վ պետք է հավաքի էտած ծառերի ճյուղերը: Խոսքս կոնկրետ վերաբերում է Նոր Նորք վարչական շրջանին:

Հայկ Մարության

-Շնորհակալություն, հարցին կպատասխանի քաղաքապետի առաջին տեղակալ Հրայր Մարգարյանը:

Հրայր Մարգարյան

-Շնորհակալություն, Նոր Նորք վարչական շրջանի հետ կապված կճշտեմ և Ձեզ կասեմ, թե աշխատանքներն ինչու չեն իրականացվել: Այսօր հանդիպում է տեղի ունեցել կանաչապատման ՓԲԸ-ների տնօրենների հետ, որի ժամանակ խոսվել է նրանց աշխատակիցներին նոր կազմավորված ՀՈԱԿ-ներ տեղափոխելու խնդրի մասին: Կարծում եմ անցումային այս փուլում կլինեն որոշ տեխնիկական դժվարություններ, որոնք արագ կվերացվեն: Կառավարումը տեղի կունենա մեկ կենտրոնից և հարցերին, կարծում եմ, ավելի արագ լուծումներ կտրվեն, շնորհակալություն:

Հռիփսիմե Առաքելյան

-Շնորհակալություն, հաջորդ հարցս վերաբերում է Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ղեկավարի պարտականություններին և, ընդհանրապես, արագ արձագանքման ինստիտուտին: Անդրանիկի փողոցի հ. 123/8 հասցեում տրված շինթույլտվության արդյունքում սեփականատերն ահռելի փոս է փորել, որտեղով անցնում են հարակից տարածքի շենքերի բարձրավուրտ էլեկտրական լարերը: Այս պահին աշխատանքները կասեցված են, և անձրևների ժամանակ կա հրդեհի վտանգ: Բնակիչներն անհանգստացած են, միգուցե հնարավոր լինի այդ տարածքը ծածկել՝ խուսափելու համար հնարավոր հոսանքազրկումներից և հրդեհներից:

Վարչական շրջանի ղեկավար պարոն Կարապետյանն արձագանքեց ընդամենն այնքանով, որ այցելեց տարածք և ծանոթացավ իրավիճակին, սակայն հարցը լուծում չստացավ: Շուտով ձյուն է գալու, հետո կրկին անձրև, իսկ այդ փոսը մնալու է, և որևէ պատահարի դեպքում ասելու ենք տեղյակ չե՞նք եղել, շնորհակալություն:

Հայկ Մարության

-Շնորհակալություն, հարցին կպատասխանի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ղեկավար պարոն Կարապետյանը, խնդրեմ:

Դավիթ Կարապետյան

-Շնորհակալություն, բարձրավուրտ էլեկտրալարերի հետ կապված ես զրուցել եմ ՀԷՑ-ի տնօրենի հետ: Քանի որ շինարարությունը դատական վեճերի պատճառով կասեցված է, իսկ նշված հարցը ՀԷՑ-ի իրավասության ներքո է, քաղաքապետարանի կամ վարչական շրջանի աշխատակազմն այդ առումով անելիք չունի: Մենք կարող ենք անվտանգության միջոցառումներ իրականացնել միայն ՀԷՑ-ի աշխատանքներն ավարտվելուց հետո: Տարածքն

ամբողջովին ծածկված է, և որևէ մեկը չի կարող անցնելուց փոսն ընկնել: Այստեղ միակ խնդիրն այն է, որ կարճ միացման արդյունքում կարող է թաղամասը հոսանքազրկվել:

Հոփսիմե Առաքելյան

-Պարոն քաղաքապետ, նիստից հետո ես Ձեզ կտրամադրեմ տեսագրությունները, և ինքներդ կհամոզվեք, թե այդ տարածքը փափ է, մարդկանցից հեռու՞ է, թե՞ ոչ: Ինչքանով էս տեղյակ եմ, գոյություն ունի այնպիսի գործընթաց, երբ անվտանգության հետ կապված նման խնդիր առաջանալու դեպքում դիմում են դատարան՝ որոշակի ժամանակավոր միջամտություն կատարելու համար:

Դավիթ Կարապետյան

-Այդ մասին ես խոսել եմ ՀԷՑ-ի տնօրենի հետ, պատասխանը նույնն է՝ դա բացառապես մասնագիտական աշխատանք է: Այնտեղ պետք չէ ոչ մի միջամտություն կատարել, մինչև հոսանքավարերի անցումները կարգավորվեն և բերվեն այնպիսի վիճակի, որ կարելի լինի նրանց ծածկել հողային շերտով կամ այլ ծածկույթով:

Հայկ Մարության

-Շնորհակալություն, պարոն Արեյան, խնդրում եմ հասցեն գրանցեք և կապ հաստատեք ՀԷՑ-ի տնօրենի հետ՝ աշխատանքները մաքսիմալ արագ կատարելու համար, որպեսզի խուսափենք հնարավոր վտանգներից:

Կամո Արեյան

-Շատ լավ, պարոն քաղաքապետ, առավոտյան անձամբ կգրադվեմ, կվերցնեմ հսկողության տակ, կհասկանամ խնդիրն ում է վերաբերվում և կներկայացնեմ:

Հայկ Մարության

-Շնորհակալություն, հաջորդ հարցը՝ ԼՈՒՅՍ խմբակցության անդամ Թեհմինա Վարդանյան, խնդրեմ:

Թեհմինա Վարդանյան

-Շնորհակալություն, հարցս վերաբերվում է կոմունալ տնտեսության վարչության պետ պարոն Խաչիկյանին: Պարոն քաղաքապետ, Դուք կոռուպցիոն ռիսկ տեսնո՞ւմ եք, որ հանձնաժողովի նախագահ է վարչության պետը, և տեղերը շահում է նրա քրոջ որդին, և եր՞բ եք իմացել այդ մասին:

Հայկ Մարության

-Շնորհակալություն հարցի համար, իրավական գնահատականները թողնենք իրավապահներին, միայն կարող եմ ասել, որ իմ համար դա ընդունելի չէ, իսկ այդ մասին ես իմացել եմ բոլորովին վերջերս:

Թեմինա Վարդանյան

-Ենթադրում եմ մամուլում հրապարակվելուց առաջ:

Հայկ Մարության

-Կարելի է ասել այո:

Թեմինա Վարդանյան

-Շնորհակալություն:

Հայկ Մարության

-Հաջորդ հարցը՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ Մարատ Թոխյան, խնդրեմ:

Մարատ Թոխյան

-Շնորհակալություն, ինձ դիմել են Երևանի Կիևյան փողոցի մի խումբ բնակիչներ՝ բողոքելով Բարբյուսի փողոցի սկզբնամասում կառուցվող բազմաբնակարան շենքի վերաբերյալ: Ես եղել եմ այնտեղ, պաստառի վրա նշված չէ, թե երբ է տրվել շինթույլտվությունը, աշխատանքներն սկսվել են մոտ մեկ շաբաթ առաջ և 7 հարկանի շենքի կառուցման ժամկետը նշված է 6 ամիս: Հարցս հետևյալն է՝ Դուք տեղյակ ե՞ք այդ շենքի շինթույլտվության մասին, այն տրվել է նախկինում, թե՞ Ձեր պաշտոնավարման ժամանակ: Ինչպիսի՞ն է Ձեր կարծիքը վերջինիս վերաբերյալ:

Հայկ Մարության

-Հարցին կպատասխանի Երևան քաղաքի գլխավոր ճարտարապետ Արթուր Մեսչյանը, խնդրեմ:

Արթուր Մեսչյան

-Շինթույլտվությունը տրվել է նախկինում՝ 14 հարկ կառուցելու համար: Ես բազմիցս հանդիպել եմ կառուցապատողի հետ, շատ ենք խոսել շենքի հարկայնությունը հնարավորինս իջեցնելու վերաբերյալ, երկար մաքառումներից հետո վերջնական որոշում ենք կայացրել 7 հարկի համար: Իմ պատասխանը հետևյալն է՝ դա չարյաց փոքրագույնն է:

Մարատ Թոխյան

-Շնորհակալություն:

Հայկ Մարության

-Շնորհակալություն, հաջորդ հարցը՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ Աննա Ջավախյան, խնդրեմ: Աննա Ջավախյանը բացակայում է դահլիճից: Հաջորդ հարցը՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ Լևոն Ջաքարյան, խնդրեմ:

Լևոն Ջաքարյան

-Հարցս վերաբերում է մի քաղաքացու դիմումի՝ այն մասին, որ փողոցում իրականացվող ասֆալտապատման աշխատանքներից հետո, նույնիսկ շատ կարճ ժամանակ

անց, այնտեղ կարող են փորձան աշխատանքներ տեղի ունենալ «ՀԷՑ», «Վեոլիա ջուր» կամ այլ ընկերությունների կողմից, որի պատճառով երկար ժամանակ այդ փոսերը մնում են: Դրանից հետո լինում է անորակ ասֆալտապատում այդ մասում: Կոնկրետ օրինակով արդեն խոսեցի Ավան վարչական շրջանի դեկավարի հետ, ասաց, որ նորից են իրականացնելու, բայց այս հարցն ավելի խորքային է: Ես ցանկանում եմ իմանալ ի՞նչ սկզբունքով ենք աշխատում ՀԷՑ-ի և մյուս տնտեսվարողների հետ, ովքեր հաճախակի այս աշխատանքներն անում են և կարծես թե մեր արած ամբողջ աշխատանքը գցում են ջուրը:

Հաջորդ հարցս էլ հնչեցնեմ, քանի որ նույն թեմայի մեջ է: Ասֆալտապատման աշխատանքներին զուգահեռ փողոցներում կառուցվում են փոքրիկ արգելապատնեշներ, որոնք արդեն սկսել են կամայական բնույթ կրել: Այսինքն՝ ով կարողանում է այդ ընթացքում համոզում է ասֆալտապատման աշխատանքներ իրականացնող ընկերությանն իր խանութի մոտ դա կառուցել: Այդ արգելապատնեշներն իրականում խանգարում են վարորդներին նորմալ երթնել: Այս երկու հարցերի մասին կցանկանայի իմանալ՝ ինչպե՞ս է կարգավորվում և ինչի՞ է այս վիճակը: Այսինքն չկա՞ համատեղ պայմանավորվածություն, որ այս աշխատանքները կատարվեն ոչ թե այն ժամանակ, երբ ասֆալտապատումն արվել վերջացել է, այլ դրանից առաջ կամ դրան զուգահեռ:

Հայկ Մարության

-Շնորհակալություն պարոն Զաքարյան: Մա ինձ տանջող հարցերից մեկն է, որի վրա շատ մեծ ուշադրություն եմ դարձնում և շատ եմ նյարդայնանում Ձեր ասած գործընթացից: Նյարդայնանում էի մինչև քաղաքապետ դառնալը՝ որպես քաղաքացի, այժմ որպես քաղաքապետ ավելի շատ եմ նյարդայնանում, որովհետև կարծես թե լուծումները տալիս ենք, մեխանիզմները գծում, բայց այդ մեխանիզմներն, այնուամենայնիվ, չեն աշխատում:

Օրինակ՝ վերջերս շատ լավ ասֆալտապատում է իրականացվել Ուրուզվայի հրապարակում, բոլոր տնտեսվարողներին և շահագրգիռ կողմերին զգուշացվել է, որ իրականացնեն իրենց աշխատանքները քաղաքապետարանի ասֆալտապատումից առաջ: Բոլորն իրենց աշխատանքները կատարեցին, ասֆալտապատումն իրականացվեց, մեկ-երկու ամիս հետո պարզվեց, որ «Դվին» հյուրանոցի համար գազ պետք է անցկացվի: Օրենքով նախատեսված պատժամիջոցներ չունենք, սա է խնդիրը:

Առավել մանրամասն կներկայացնի քաղաքապետի խորհրդական պարոն Արեյանը:

Կամո Արեյան

-Մեխանիզմը հետևյալն է պարոն Զաքարյան. ըստ էության մենք ունենք քաղաքացիաիրավական պայմանագիր «Վեոլիա ջուր», «Գազպրոմ Արմենիա» և «ՀԷՑ» ընկերությունների հետ: Ունենք տեխնիկական պայմաններ, թե ինչպես պետք է նրանք

խրամուղիները քանդեն, վերականգնեն, ինչ չափորոշիչներ են սահմանված: Մինևույն ժամանակ պայմանագրով նախատեսված է փոխհատուցում:

Հաջորդ օրենսդրական կարգավորումն այն է, որ որևէ աշխատանք արվում է հետագիծ-նախագծի հիման վրա տրված շինթույլտվությամբ՝ բացառությամբ վթարների, որոնք անհետաձգելի աշխատանքներ են և կարող են իրականացվել միայն համայնքի ղեկավարին տեղյակ պահելուց հետո: Ըստ այդմ՝ նրանք մեզ ահագանգում են, որ ունեն վթար այս վայրում, մենք թույլ ենք տալիս քանդելու: Նույն պահանջները վերաբերում է քանդման աշխատանքներին՝ տեղում, նույն պայմաններով պետք է քանդի և տարածքը բերի նախկին տեսքին:

Ձեր ասած դեպքը վերաբերում է տարեկան ծրագրին: Շինարարության և բարեկարգման վարչության պետ պարոն Գրիգոր Հարությունյանը կվկայի, որ հունվար ամսին մենք բոլոր օպերատորներին տրամադրում ենք տարեկան բյուջեով և ծրագրով նախատեսված նորոգման ենթակա ճանապարհների ցանկը: Օրինակ՝ այսօր բյուջեն հաստատվեց, հունվարին արդեն շինարարության և բարեկարգման վարչությունը նախանշում է նորոգման ծավալային նորոգում իրականացվող բոլոր փողոցների ասֆալտբետոնյա ծածկի նորոգման ծրագիրը, մենք տրամադրում ենք բոլոր կապալառուներին: Մինևույն ժամանակ վարչական շրջանի ղեկավարը կարող է ծանուցել բոլոր անհատ քաղաքացիներին և այդ փողոցի վրա ով ինչ գործ ունի անելու, դա պետք է իրականացնի մեր ասֆալտապատումից առաջ:

Ասֆալտապատումն իրականացնելուց հետո կարող է լինել երկու դեպք՝ վթար, գազի արտահոսք, հոսանքի անջատում կամ ջրի արտահոսք, որն ուղղակի չենք կարող թույլ չտալ: Երկրորդը՝ մարդիկ դիմում են ուշացած, ինչպես նշեց պարոն քաղաքապետն Ուրուզվայի հրապարակի դեպքը: Բոլոր իրազեկումներն արվել էին վարչական շրջանի հետ միասին, հանկարծ, իր նախագծով ավարտական ակտի ստացման փուլում, պարզվում է, որ կոմունիկացիա չկա: Սկսում են մեղադրական նամակներ մեր հասցեին, դիմում են ՀՀ կառավարություն, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին, Ազգային ժողով: Չարդարացված են այս բոլոր դիմումները, որովհետև նախապես մենք զգուշացրել ենք իրենց և հանկարծ բիզնեսն սկսում է մեղադրականով խոսել մեր հետ, որ դուք չեք թողնում գործարկենք հյուրանոցը կամ ռեստորանը կամ հասարակական այլ շինությունը, կամ բնակելի շինությունը:

Սա է գործող մեխանիզմը, բայց Ձեր ասածի մեջ այո, կա ճշմարտություն: Ունենք դեպքեր ոչ միայն Ավան վարչական շրջանում, այլ բոլոր վարչական շրջաններում, երբ

կատարված աշխատանքից հետո, հանդիպում ենք փոսի, նստվածքների: Այժմ այդ աշխատանքներն են ընթանում:

Օրինակ՝ հինգ վարչական շրջաններում վարկային ծրագրով 152 կմ ջրամատակարարման ցանցի արդիականացում և անհատական միացումների ծրագիր է իրականացվում: Մեր գույքագրումից հետո ի հայտ են եկել թերություններ: Էրեբունի վարչական շրջանում դրանք վերացված են, այժմ Նորք-Մարաշ վարչական շրջանում իրականացվում են փոսերի վերանորոգման, վերականգնման, ասֆալտբետոնյա ծածկի վերականգնման աշխատանքները: Վարչարարության կողքին իրավական մեծ բաց չկա, պարզապես ինչ-որ տեղ բնակիչն ու բիզնեսը երբեմն ձգտում են իրենց շահի թելադրանքն ավելի շատ պարտադրել, բայց հարցը մեր հսկողության տակ է: Մենք կաշխատենք նոր տարում շինարարության և բարեկարգման վարչության պետի հետ այդ ծրագիրը ժամանակից շուտ տրամադրել իրենց: Վարչական շրջանների ղեկավարների հետ այսուհետ մոնիտորինգի կենթարկվենք և գնալու ենք ամենակոշտ քայլերին՝ ուղղակի թույլ չենք տա, անգամ, եթե պնդի հայտատուն՝ հանրային կարգավորող հանձնաժողովը:

Հայկ Մարության

-Շնորհակալություն, պարոն Զաքարյան նաև ուզում եմ ասել, որ այժմ շատ մեծ ուշադրություն եմ դարձնում կահավորման վրա և կարծես թե մողելն աշխատում է: Եթե «ՀԷՑ», «Վեոլիա ջուր» կամ «Գազպրոմ Արմենիա» ընկերությունները գործ են անում այդտեղ, կահավորումը շատ վատ վիճակում է լինում: Մենք ժամանակ ենք տրամադրել իրենց եվրոպական ստանդարտներին համապատասխան կահավորում իրականացնելու համար: Նկարներով օրինակներ են տրվել, որ իրենց կապալառուներին ստիպեն այդ մակարդակով կահավորելու համար:

Լևոն Զաքարյան

-Շնորհակալություն, փոքր արգելապատնեշների մասով խնդրում եմ ուշադրություն ավելի շատ դարձնել: Մրցույթները շահող ընկերություններին ևս մեկ անգամ կոչ անել, որ ինչ-որ մարդկանց խնդրանքով նման արգելապատնեշներ պետք չէ կառուցել: Իրենց տեխնիկական բնութագրերում դա բացարձակապես նշված չէ: Իրենց աշխատանքն ասֆալտ անելն է, ոչ թե ինչ-որ արգելապատնեշներ կառուցելը, որոնք հետագայում ուղղակի գլխացավանք են դառնում վարորդների համար:

Հայկ Մարության

-Արհեստական անհարթությունների մասով քաղաքապետի առաջին տեղակալ Հրաչյա Սարգսյանը կմանրամասնի:

Հրայա Սարգսյան

-Արհեստական այդ անհարթությունների մասով ասեմ, քանի որ երթևեկության պատասխանատուն ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայությունն է, նրանց հետ են կատարվում աշխատանքները, եթե ինչ-որ դիմումներ ենք ստացած լինում: Առանձին դեպքերում, եթե քաղաքացիներ կան, ովքեր խնդրում են իրենց սրճարանի կամ խանութի դիմաց արհեստական անհարթություն կառուցել, նման տեղեկատվություն չունենք, եթե կա, տրամադրեք մեզ: Դրանից բացի կցանկանայի նշել, որ այս տարի արդեն մի քանի լուսացույց ենք տեղադրել, որոնց տեղադրման արդյունքում երկու տեղ այդ արհեստական խոչընդոտներն ամբողջությամբ պետք է հանենք:

Լևոն Զաքարյան

-Շնորհակալություն, պարոն Սարգսյան, ասածս չէր վերաբերում քաղաքապետարանի՝ ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության հետ կատարած աշխատանքին: Խոսքը վերաբերում է բնակիչների կամ տնտեսվարողների հորդորով ինքնակամ կառուցվածներին: Դեպքերը շատ են, ասել եմ արդեն Աջափնյակ վարչական շրջանի ղեկավարին, ուղղակի անընդհատ դրանք ավելանում են: Նույնիսկ երկրորդական, երրորդական փողոցների վրա, որտեղ դրա անհրաժեշտությունը չկա, ուղղակի խանութ է և ուզում է, որ դա լինի: Խոսքս ոչ թե կահավորումների, լույսացույցերի մոտ արվողների մասին է, այլ փողոցներում՝ մեկի կամայական կամքով արվողների, որ ասֆալտապատողը չի մերժում անում է:

Հայկ Մարության

-Շնորհակալություն, հաջորդ հարցը՝ ԻՍ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ Արմեն Գալջյան, խնդրեմ:

Արմեն Գալջյան

-Շնորհակալություն, հարցս վերաբերում էր կրթական երկու հաստատությունների միջև առաջացած վեճին՝ ճաղավանդակների հետ կապված, որի պատասխանն արդեն տրվեց:

Հայկ Մարության

-Շնորհակալություն, հաջորդ հարցը՝ ԻՍ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ Սաթենիկ Մկրտչյան, խնդրեմ:

Սաթենիկ Մկրտչյան

-Շնորհակալություն, պարոն քաղաքապետ: Հարցս վերաբերում է ամանորյա ձևավորումներին: Չնայած, որ այսօր մենք հրապարակում ունենք ամբողջական մոտեցումով արված գարդարանք, բայց մի հարց եմ ուզում ևս մեկ անգամ բարձրացնել՝ կապված հրապարակի վերգետնյա անցման հետ: Այն շատ գեղեցիկ և լուսավոր է, սակայն կարո՞ղ ենք

արդյոք անել այնպես, որ հաջորդ տարի այն լինի ավելի ներառական: Դա հարմարեցված լինի ոչ միայն հաշմանդամություն ունեցող մարդկանց համար, այլև տարեցների, որպեսզի կարողանան այդ բարձր աստիճանները բարձրանալ: Ինչպես նաև այն բոլոր մարդկանց համար, ովքեր որոշակի սահմանափակումներ ունեն: Տեղյակ եմ, որ եղել է վերելակ տեղադրելու մասին հարցը, որը հնարավոր չի եղել իրականացնել: Կարծում եմ, որ ծրագրի նախանշման փուլում, եթե փորձենք հարցին լուծում տալ, կկարողանանք հաջորդ տարվա համար այդ խնդիրը կարգավորել: Գուցե պետք լինի հրաժարվել մի քանի երգչի հոնորարից կամ լույսերի մի քանի առկայծումից, փոխարենն ունենալ ներառականություն:

Հայկ Մարության

-Հարցին կպատասխանի քաղաքապետի տեղակալ Տիգրան Վիրաբյանը, խնդրեմ:

Տիգրան Վիրաբյան

-Շնորհակալություն, այս հարցը, իսկապես, քննարկվում է, ուզում եմ վերջնական պատասխան տալ դրան: Երևան քաղաքի **2019թ.** բյուջեն պլանավորելիս ամանորյա միջոցառումների ծախսը կազմում էր **54** մլն. դրամ: Դրա մեջ վերգետնյա անցումը ոչ մի կերպ ներառված չէր: Միջոցառումների ծավալն ավելացնելու որոշումը կայացվել է հոկտեմբեր ամսին: Նախագծման առաջադրանքը տրամադրելիս, բնականաբար, քննարկել ենք նաև ներառականության հարցը, սակայն ն՛ նախագծողը, ն՛ կատարողն ուղղակի հնարավորություն չեն ունեցել այդ կարճ ժամանակահատվածում նախագծել Ձեր նշած պայմաններին համապատասխանող վերգետնյա անցում: Միակ տարբերակը պետք է լիներ վերելակի կառուցումը, սակայն եթե մենք ժամանակավոր վերգետնյա անցման վրա քննարկեինք վերելակի կառուցման տարբերակ, այդտեղ կառաջանար անվտանգության ևս մի քանի կանոնների պահպանման խնդիր: Նախագծման աշխատանքներն այդ ժամկետներում, բնականաբար, չէին հասցնի ավարտել:

Կարծում եմ, որ հաջորդ տարիներին, եթե մենք հնարավորություն ունենանք նման մեծածավալ միջոցառումներ իրականացնելու, ժամկետի խնդիր չենք ունենա և նախագծերը կարվեն այնպես, որ ապահովվի ներառականությունը: Շնորհակալություն:

Մաթենիկ Մկրտչյան

-Շնորհակալություն, երկրորդ հարցը վերաբերում է «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրին և **հ. 93** մանկապարտեզին: Ե՞րբ պիտի կառուցվի ցանկապատը, որը պետք է լինի նաև վերնի մասում, քանի որ մանկապարտեզի ցանկապատը մի մասով չի սահմանափակվում:

Հայկ Մարության

-Հարցին կպատասխանի քաղաքապետի տեղակալ Տիգրան Վիրաբյանը, խնդրեմ:

Տիգրան Վիրաբյան

-Շնորհակալություն, ես զրուցել եմ պարոն Բլեյանի հետ, մեր բոլոր պայմանավորվածություններն ուժի մեջ են, կարող ենք աշխատանքները շարունակել առանց որևէ կողմի համար խոչընդոտ ստեղծելու:

Հայկ Մարության

-Շնորհակալություն, հաջորդ հարցը՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ Արման Անտոնյան, ինդրեմ:

Արման Անտոնյան

-Շնորհակալություն պարոն քաղաքապետ, հարցս վերաբերում է քաղաքապետարանի աշխատակազմի վերահսկողության վարչության և ներքին աուդիտի բաժնի գործունեությանը: Ընդհանրական հարց եմ ուզում ուղղել, թե տարվա ընթացքում ի՞նչ աշխատանքներ են կատարվել երկու վարչությունների կողմից, ի՞նչ բացահայտումներ են արվել, ի՞նչ խնդիրների մասին է բարձրաձայնվել և ի՞նչ լուծումներ են ստացել:

Հայկ Մարության

-Շնորհակալություն, ասեմ, որ բավական մեծ ծավալով աշխատանք է կատարվել: Աուդիտի մասով տեղյակ է պարոն Սարգսյանը, քանի որ ինքն է զբաղվել, իսկ վերահսկողության մասով ասեմ, որ հսկայական աշխատանք է կատարվել ՀՈԱԿ-ների, ՊՈԱԿ-ների, ՓԲԸ-ների հետ, վեր ենք հանել խնդիրները և փորձել լուծումներ տալ, սակայն այդ ամենը մանրամասն ներկայացնելը բավական մեծ զեկույց կլինի, ինչի համար շատ ժամանակ կպահանջվի:

Արման Անտոնյան

-Շնորհակալություն:

Հայկ Մարության

-Ավարտվեց հարց ու պատասխանը, ավագանու հարգելի անդամներ, Երևանի ավագանու 3-րդ նստաշրջանի 4-րդ նիստը հայտարարում եմ փակված: Շնորհակալություն, ցտեսություն:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ

Կազմեց՝ Ա. Եփրիկյան